# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար արդյունավետ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը,

առաջնորդվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

հիմնվելով սույն համաձայնագրի մասնակից պետությունների միջազգային պայմանագրերի դրույթների վրա,

ձգտելով ստեղծել հարկադիր վտարման ենթակա անձանց փաստաթղթավորման ժամանակ համագործակցության արդյունավետ մեխանիզմներ,

ընդգծելով, որ սույն համաձայնագիրը չի նվազեցնում սույն համաձայնագրի մասնակից պետությունների՝ միջազգային իրավունքով, այդ թվում՝ 1948 թվականի դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, 1984 թվականի դեկտեմբերի 10-ի Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայով, 1951 թվականի հուլիսի 28-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով, 1967 թվականի հունվարի 31-ի Փախստականների կարգավիճակի մասին արձանագրությամբ ամրագրված իրավունքները, պարտավորությունները եւ պատասխանատվությունը,

**համաձայնեցին հետեւյալի մասին՝**

### Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն համաձայնագրով սահմանվում է Կողմերի փոխգործակցության կարգը՝ անձը հաստատող եւ պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ վավերական փաստաթղթեր չունեցող հարկադիր վտարման ենթակա անձանց՝

վերադարձի վկայականներով փաստաթղթավորման (այդ անձանց վերադարձի վկայականների ձեւակերպման եւ տրամադրման) հարցերով:

2. Սույն համաձայնագիրը չի առնչվում անձանց՝ քրեական գործերով հետընդունման եւ հանձնման ոլորտում Կողմերի համագործակցության հարցերին:

## Հոդված 2. Հիմնական եզրույթները

Սույն համաձայնագրի նպատակներով գործածվող եզրույթները նշանակում են հետեւյալը՝

ա) ծագման երկիր՝ սույն համաձայնագրի մասնակից պետություն, որի տարածքում հարկադիր վտարման ենթակա անձը, նրա օրենսդրությանը համապատասխան, ունի հետեւյալ իրավական կարգավիճակը. տվյալ պետության քաղաքացի, կամ դրա տարածքում օրինական հիմքերով մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձ (տվյալ պետությունում ունի քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ), կամ անձ, որին տվյալ պետության տարածքում տրամադրվել է փախստականի կարգավիճակ (լրացուցիչ պաշտպանություն կամ ապաստան).

բ) գտնվելու վայրի պետություն՝ սույն համաձայնագրի մասնակից պետություն, որի տարածքում է գտնվում հարկադիր վտարման ենթակա անձը.

գ) միգրացիոն մարմին՝ սույն համաձայնագրի մասնակից պետության օրենսդրությանը համապատասխան՝ միգրացիայի ոլորտում լիազորված մարմին.

դ) անձնական տվյալներ՝ ցանկացած տեղեկատվություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում է նույնականացված ֆիզիկական անձին կամ այն ֆիզիկական անձին, որը կարող է նույնականացվել.

ե) ծագման պետության ներկայացուցչություն՝ ծագման պետության՝ վերադարձի վկայականների ձեւակերպման եւ տրամադրման համար լիազորված մարմին,

զ) հարկադիր վտարում՝ գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում անձի հարկադիր տեղափոխումը գտնվելու վայրի պետության տարածքից ծագման պետության տարածք (բացառությամբ քրեական գործերով անձանց հետընդունման եւ հանձնման).

է) վերադարձի վկայական՝ հարկադիր վտարման ենթակա անձի՝ անձը հաստատող եւ գտնվելու վայրի պետության տարածքից ծագման պետության

տարածք մուտքի (վերադարձի) իրավունք տրամադրող ժամանակավոր փաստաթուղթ: Կողմերը, սույն համաձայնագրի ստորագրման օրվանից 30 օրվա ընթացքում, դիվանագիտական ուղիներով փոխանակում են վերադարձի վկայականների օրինակները:

**Հոդված 3. Հարցման ուղարկումը**

1. Այն դեպքում, երբ հարկադիր վտարման ենթակա անձը չունի անձը հաստատող եւ պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ վավերական փաստաթուղթ, գտնվելու վայրի պետության միգրացիոն մարմինը հարցում է ուղարկում ծագման պետության ներկայացուցչություն՝ ծագման պետությունում նրա անձը եւ սույն համաձայնագրի 2-րդ հոդվածի «ա» կետով սահմանված իրավական կարգավիճակը պարզելու նպատակով:

2. Հարցումը գրավոր ուղարկվում է փոստային կապի միջոցով եւ ստորագրվում է գտնվելու վայրի պետության միգրացիոն մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

3. Հարցումը պետք է ներառի՝

ա) գտնվելու վայրի պետության միգրացիոն մարմնի անվանումը.

բ) հարցման էության շարադրումը,

գ) հարցման նպատակի նշումը եւ հիմնավորումը:

4. Հարցմանը կից ներկայացվում են հետեւյալ փաստաթղթերը՝

ա) հարկադիր վտարման ենթակա անձի լուսանկարը,

բ) հարկադիր վտարման ենթակա անձի հարցաթերթիկը՝ սույն համաձայնագրի հավելվածի համաձայն,

գ) հարկադիր վտարման ենթակա անձի կենսագրությունը:

5. Հարցմանը կարող են կցվել հետեւյալ փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում)՝

ա) ծագման պետության կողմից որպես անձը հաստատող ճանաչվող, այդ թվում՝ գործողության ժամկետը լրացած փաստաթղթերը, որոնք նախկինում տրվել են հարկադիր վտարման ենթակա անձին, կամ դրանց պատճենները.

բ) հարկադիր վտարման ենթակա անձի ծննդյան վկայականը կամ դրա պատճենը.

գ) հարկադիր վտարման ենթակա անձի՝ ծագման պետության տարածքում մշտական բնակության փաստը հաստատող փաստաթղթերը կամ դրանց պատճենները,

դ) հարկադիր վտարման ենթակա անձի մատնադրոշմային քարտը,

ե) այլ փաստաթղթեր, որոնք, գտնվելու վայրի պետության միգրացիոն մարմնի կարծիքով, կնպաստեն հարցման կատարմանը:

6. Անհրաժեշտության դեպքում, ծագման պետության ներկայացուցչությունն իրավունք ունի գտնվելու վայրի պետության միգրացիոն մարմնից պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր:

## Հոդված 4. Անձնական տվյալների պաշտպանությունը

Հարկադիր վտարման ենթակա անձանց անձնական տվյալները սույն համաձայնագրի դրույթների իրականացման շրջանակներում փոխանցվում են առանց այդ անձանց համաձայնության, օգտագործվում են միայն սույն համաձայնագրի նպատակների համար եւ ենթակա են պաշտպանության եւ մշակման սույն համաձայնագրի մասնակից պետություններում՝ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում օրենսդրությանը եւ այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցներն են նրանք:

## Հոդված 5. Հարցումը կատարելու ժամկետները

1. Ծագման պետության ներկայացուցչությունը պատասխանն ուղարկում է գտնվելու վայրի պետության՝ հարցումը նախաձեռնող միգրացիոն մարմին՝ հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում:

2. Այն դեպքում, երբ սահմանված ժամկետում հնարավոր չի եղել պարզել ծագման պետությունում հարկադիր վտարման ենթակա անձի՝ սույն համաձայնագրի 2-րդ հոդվածի «ա» կետով սահմանված իրավական կարգավիճակի առկայությունը կամ բացակայությունը, հարցման պատասխանի ժամկետը կարող է երկարաձգվել, սակայն ոչ ավելի, քան 30 օրացուցային օրով, ինչի մասին ծագման պետության ներկայացուցչությունը տեղեկացնում է հարցման նախաձեռնողին:

3. Այն դեպքում, երբ հարցման ուսումնասիրման ընթացքում հաստատվում է ծագման պետությունում՝ հարկադիր վտարման ենթակա անձի՝ սույն համաձայնագրի 2-րդ հոդվածի «ա» կետով սահմանված իրավական

կարգավիճակը, ծագման պետության ներկայացուցչությունն այդ անձի համար ձեւակերպում է վերադարձի վկայական՝ նրա իրավական կարգավիճակի հաստատման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Վերադարձի վկայականը ծագման պետության ներկայացուցչության կողմից փոստային կապի միջոցով ստացված հարցման պատասխանի հետ միասին ուղարկվում է գտնվելու վայրի պետության՝ հարցումը նախաձեռնող միգրացիոն մարմին՝ դրա ձեւակերպման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

## Հոդված 6. Օգտագործվող լեզուները

Սույն համաձայնագրի շրջանակներում Կողմերի կողմից ուղարկվող փաստաթղթերը կազմվում են ռուսերենով կամ ուղեկցվում են ռուսերեն թարգմանությամբ:

## Հոդված 7. Ծախսերը

Կողմերն ինքնուրույն են կրում սույն համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում:

Հարկադիր վտարման ենթակա անձանց վերադարձի վկայականի ձեւակերպումը եւ տրամադրումը ծագման պետության ներկայացուցչության կողմից իրականացվում է առանց հյուպատոսական եւ այլ վճարների գանձման:

## Հոդված 8. Վեճերի լուծումը

Կողմերի միջեւ սույն համաձայնագրի իրականացման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

## Հոդված 9. Փոփոխություններ կատարելը

Փոխադարձ համաձայնությամբ Կողմերը սույն համաձայնագրում կարող են կատարել դրա անբաժանելի մաս կազմող փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

## Հոդված 10. Ուժի մեջ մտնելը

Սույն համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է դրա ստորագրման օրվանից 30 օրը լրանալուց հետո եւ ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումներն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Սույն համաձայնագիրն ստորագրելիս Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է հայտարարելու, որ ժամանակավորապես չի կիրառի սույն համաձայնագիրը կամ այն ժամանակավորապես կկիրառի սույն համաձայնագրով նախատեսված ամսաթվից տարբերվող այլ ամսաթվից սկսած:

## Հոդված 11. Միանալը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

## Հոդված 12. Համաձայնագրի գործողության ժամկետը եւ դրանից դուրս գալը

Սույն համաձայնագիրը կնքվում է անսահմանափակ ժամկետով: Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն համաձայնագրից՝ այդպիսի մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին դուրս գալուց ոչ ուշ, քան 90 օր առաջ՝ կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած ֆինանսական եւ այլ պարտավորություններ:

Սույն համաձայնագրից Կողմերից մեկի դուրս գալու դեպքում տվյալ Կողմի համար անձնական տվյալների պաշտպանության մասին 4-րդ հոդվածի դրույթները շարունակում են ուժի մեջ մնալ:

Կատարված է Սոչի քաղաքում, 2023 թվականի հունիսի 8-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից՝**

______________________________

**Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]վերապահումով*

**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից**

______________________________

**Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

______________________________

**Մոլդովայի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Տաջիկստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

______________________________

**Թուրքմենստանի կառավարության կողմից՝**

______________________________

**Ուզբեկստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

______________________________

**Ուկրաինայի կառավարության կողմից՝**

*Հավելված*
*«Անկախ Պետությունների*
*Համագործակցության մասնակից*
*պետությունների՝ հարկադիր վտարման*
*ենթակա անձանց՝ վերադարձի*
*վկայականներով փաստաթղթավորման*
*հարցերով փոխգործակցության մասին»*
*2023 թվականի հունիսի 8-ի*
*համաձայնագրի*

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

հարկադիր վտարման ենթակա անձի

1. Ազգանուն ____________________________________________

(լատինական եւ (կամ) կիրիլյան գրադարձությամբ)

2. Անուն____________________________________

(լատինական եւ (կամ) կիրիլյան գրադարձությամբ)

3. Հայրանուն (առկայության դեպքում) ____________________
_____________________________________________

4. Նախկին ազգանունները, անունները, հայրանունները (դրանց առկայության դեպքում) ____________________________
_____________________________________________

***Լուսանկարի տեղ***

***Կ.Տ.***

5. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը ______________________

6. Սեռը_________________________________________

7. Ծննդյան վայրը (պետություն/հանրապետություն, երկրամաս, մարզ, բնակավայր) __________________________________

8. Քաղաքացիությունը ______________________________________

9. Ծագման պետությունը ______________________________________
__________________________________________________________

10. Մշտական բնակության հասցեն ________________________________

11. Տեղեկություններ անձը հաստատող եւ պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ փաստաթղթի մասին (անձնագիր, փախստականի վկայական, այլ), որը կորել է կամ որի գործողության ժամկետը լրացել է, կամ որը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի (առկայության դեպքում)

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

12. Անձը հաստատող եւ պետական սահմանը հատելու համար անհրաժեշտ փաստաթղթի բացակայությանը հանգեցրած հանգամանքները ______________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

13. Ընտանիքի անդամների եւ մերձավոր բարեկամների մասին տեղեկություններ, այդ թվում՝ ծագման պետությունում

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

14. Այլ տեղեկություններ ______________________________________________________

(տեղեկատվություն, որը կարող է հիմք ծառայել

_______________________________________________________________________________

հարկադիր վտարման ենթակա անձի անձը եւ ծագման պետությունում

_______________________________________________________________________________

նրա իրավական կարգավիճակը պարզելու համար կամ կնպաստի դրան)

_____________________________________________

(հարցվող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի ազգանունը, անվան սկզբնատառերը)

_________________________

(ստորագրություն)

Հարցաթերթիկը կազմեց՝

_____________________________________________

(միգրացիոն մարմնի աշխատակցի պաշտոնը)
(ստորագրություն)

_________________________

(վերծանումը)

«___»_____________20_____թ.

______________________________
(հարցաթերթիկը կազմելու վայրը)

Կ.Տ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄ**

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրի**

1. Հայաստանի Հանրապետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ կմտնի եւ կկիրառվի Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան, որը չի նախատեսում միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառում:

2. Հայաստանի Հանրապետությունն ստորագրում է սույն համաձայնագիրը՝ պայմանով, որ իրեն իրավունք է վերապահում առանձին որոշում կայացնելու «ԱՊՀ մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք կմիանան սույն համաձայնագրին այն ստորագրելուց հետո:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ՝** *{ստորագրություն}* **Նիկոլ Փաշինյան**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի հունիսի 8-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ հարկադիր վտարման ենթակա անձանց՝ վերադարձի վկայականներով փաստաթղթավորման հարցերով փոխգործակցության մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**